



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» հոկտեմբերի 2018թ.

N 34-ՆԿ

«ԳՅՈՒՄՐԻԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ /ՆՇԱՆԱԿՄԱՆ/ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 3-րդ և 12-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի օգոստոսի 10-ի N 129-Ն հրամանի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ընտրության (նշանակման) համար հայտարարել բաց մրցույթ՝ 2018 թվականի դեկտեմբերի 3-ին, ժամը 10⁰⁰-ին:
2. Նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատարին՝
 - 1) երկու անգամ, հնգօրյա պարբերականությամբ ապահովել սույն հրամանի և մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը՝ Նախարարության պաշտոնական կայքէջում և զանգվածային լրատվության միջոցներով.
 - 2) ապահովել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի օգոստոսի 10-ի N 129-Ն հրամանից բխող անհրաժեշտ միջոցառումները:
3. Նախարարության անձնակազմի կառավարման բաժնի պետի պաշտոնակատարին՝ ապահովել մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացնող քաղաքացիների փաստաթղթերի ընդունումը և մրցույթի անցկացման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ